

**ՀԱՅ ԲԺԻՇԿՆԵՐԸ ԵՎ ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ (XIX դ.
երկրորդ կես-XX դ. սկիզբ)**

ԳԻՆՈՍՅԱՆ Ն. Լ.

Բժշկությունն այն ասպարեզներից մեկն է, որտեղ հայերը ցուցաբերել են իրենց տաղանդը և բացառիկ դեր խաղացել Օսմանյան կայսրության այդ բնագավառի զարգացման գործում: Հայ բժիշկները, նախնական կրթությունն ստանալով Օսմանյան կայսրությունում, իրենց ուսումը շարունակել են եվրոպական երկրների հայտնի բժշկական կենտրոններում: Որոշ ժամանակ այնտեղ աշխատելով՝ մեծ ճանաչում են ձեռք բերել և արժանացել բարձր գնահատականի: Վերադառնալով Օսմանյան կայսրություն՝ իրենց գիտելիքները ի սպաս են դրել երկրի բժշկության զարգացմանը: Նրանցից շատերը հմուտ դասախոսներ էին, բժշկական թերթերի և ամսագրերի հիմնադիրներ, բազմաթիվ դասագրքերի, գիտական հոդվածների, մասնագիտական գրականության, հիմնարար աշխատությունների և հայտնագործությունների հեղինակներ: Հայ բժիշկները ծառայել են թուրքական բանակում, որպես զինվորական բժիշկներ՝ մասնակցելով Բալկանյան, Առաջին համաշխարհային պատերազմներին: Աշխատել են նաև տարբեր դեսպանատներում, մասնակցել են Կարմիր մահիկի հիմնադրմանը, հասել են բարձր զինվորական աստիճանների, արժանացել բազմաթիվ կառավարական պարգևների: Տասը հայ բժիշկ՝ Տիգրան Փեշտիմալձյանը, Ստեփան Ասլանյանը, Միքայել Խորասանձյանը, Կարապետ Իսքենդերյանը, Անտոն Թնկըրյանը, Գաբրիել Սևյանը, Անտոն Նաֆիլյանը, Անդրանիկ Կրճիկյանը, Վահան Մանվելյանը, Տիգրան Բաբայանը ստացել են փառաբանության տիտղոս: Օսմանյան բժշկական ընկերության հիմնադիրներն են եղել՝ Հակոբ Դավուդյանը, Սերովբե Վիչենյանը (Սերվիչեն), Գասպար Մինապյանը, Միքայել Խորասանձյանը: Միայն Կ. Պոլսում 1880-ական թթ. կար 300-ից ավել հայ բժիշկ¹:

Ինչպես նշում է Ն. Գոլոբորոդկոն, թուրքերը շատ հեռու էին բժշկությունից, և «թուրք բժիշկների մեծ մասը չունեի բժշկական կրթություն, բուժում էին թալիսմաններով կամ դեղաբույսերով, այսինքն՝ հեքիմներ էին, որոնց օգնությանը չէին դիմում ո՛չ եվրոպացիները, ո՛չ էլ կրթված թուրքերը: Բուժվում էին սովորաբար հայերի մոտ»²: Հայտնի բժիշկ-գիտնական Լեոն Շվարցենբերգը գրում է. «Այնպիսի մի քաղաքակիրթ ազգի համար, ինչպիսին հայերն են, բժշկության ասպարեզում հետ մնալը անթույլատրելի կլինի: Սովորելու նկատմամբ հայերի ունեցած պահանջի շնորհիվ հայ բժշկությունը արագորեն ծաղկում ապրեց: Բժշկական ուսումնարանները հանրաճանաչ դարձան, և տարբեր երկրներում կրթություն

¹ Աճառյան Հ., Հայոց դերը Օսմանյան կայսրության մեջ, Ե., 1999, էջ 19:

² Голобородько Н., Турция, М., 1913, с. 94.

ստացած հայ բժիշկները ուշադրության կենտրոնում հայտնվեցին: Օսմանյան կայսրությունում իրենց մասնագիտությամբ ազատորեն զբաղվելու լայն հնարավորություններ ստանալով՝ նրանք առավել ծառայեցին այդ պետությանը: Մենք չենք կարող երախտապարտ չլինել այն բոլոր բժիշկներին և գիտնականներին, որոնք իրենց քրտնաջան աշխատանքով նպաստեցին Օսմանյան կայսրության բժշկության զարգացմանը»³:

Մինչև XIX դ. առաջին քառորդը Կ. Պոլսում մասնագիտացված բժշկություն գոյություն չուներ. բուժում էին հեքիմները կամ սափրիչները, որոնք ավելի մեծ ճանաչում ունեին, քան գիտական բժշկության շատ ներկայացուցիչներ: Այս հանգամանքը կարելի է բացատրել նրանով, որ, այսպես կոչված, «ժողովրդական բժիշկները» ամեննին անգրագետ փորձապաշտներ (եմպիրիկներ) չէին և իրենց գիտելիքները քաղում էին հայկական միջնադարյան բժշկական գրականությունից: Այս տիպի հեքիմ-բժիշկներից ամենաճանաչվածը Շահնագարյանների գերդաստանն էր, որը XVIII դ. վերջից մինչև XIX դ. սկիզբը տվել է մի շարք ոսկրաբույժներ (սնխչի), որոնց փառքը ավելի քան 100 տարի թնդում էր Օսմանյան կայսրության մայրաքաղաքում⁴: Այդ գերդաստանի առաջին ներկայացուցիչը՝ Ռաֆայել Շահնագարյանը, ծագումով Պարսկաստանի Նոր Ջուղա քաղաքից էր: Նա եկել էր Կ. Պոլիս՝ պարսկական շահի հանձնարարականով: Պատահականությունը դարձրեց նրան սուլթան Մելիմ III-ի պալատական ոսկրաբույժը: Վերջինս մի օր կոտրել էր թևը, և Ռաֆայելին բերել էին սուլթանի մոտ, որին բարեհաջող և կարճ ժամանակում բուժել էր: Որպես պարզ, սուլթանը Ռաֆայելին և նրա ընտանիքին ազատեց բոլոր հարկերից և տվեց մի շարք արտոնություններ (Ռաֆայելը կարող էր ձիուց չիջնել մահմեդականի հանդիպելիս և իրավունք էր ստացել հագնել դեղնագույն կոշիկներ, որը թույլատրվում էր միայն մահմեդականներին): Նրա որդիները՝ Շահնագարը, Օհանը, Թադեոսը, Արթինը և Ստեփանը, շարունակելով հոր գործը, նույնպես հասան մեծ հաջողությունների: Հետաքրքիր է այն փաստը, որ Ռաֆայելի կինն էլ էր այդ գործի գիտակ և իր երեխաներին անձամբ էր սովորեցնում կոտրվածքների և հողախախտումների բուժումը: Շահնագարը Մահմուդ Երկրորդի պալատական ոսկրաբույժն էր: Քանի որ շատ հայտնի էր և մեծ հեղինակություն ուներ, սպասարկում էր նույնիսկ սուլթանի հարեմը և օգտվում էր այնպիսի արտոնություններից, որոնցից գուրկ էին նույնիսկ սուլթանի մերձավորները: Շահնագարի եղբայրը՝ Օհանը, զբաղեցրել է այս պաշտոնը Աբդուլ Մեջիդի և Աբդուլ Ազիզի օրոք: Օհանի որդին՝ Շահնիկը, արդեն դիպլոմով բժիշկ էր, ավարտել էր Կ. Պոլսի բժշկական վարժարանը: Չնայած բարձրագույն կրթությանը, նա շարունակվում էր զբաղվել իր նախնիների մասնագիտությամբ՝ վայելելով մեծ հեղինակություն: Շահնիկի մահից հետո պալատական ոսկրաբույժ է նշանակվում Միքեն (Միքայել)՝ Ստեփանի կրտսեր որդին, որին Աբդուլ Համիդը վեր էր դասում իր բոլոր օտարերկրյա պալատական բժիշկներից և վստահում

ըստ

ամենայ-

³ Yarman A. *Osmanlı Sağlık Hizmetlerinde Ermeniler ve Surb Pirgıç Ermeni Hastanesi Tarihi, Istanbul, 2001, s. 7.*

⁴ Оганесян Л., *История медицины в Армении с древнейших времен до наших дней, т. IV, Е., 1947, с. 163.*

նի: Պարզևատրվել է բազմաթիվ շքանշաններով: Միքեի որդին՝ Էդուարդը, այս գերդաստանի վերջին ներկայացուցիչն էր, որ զբաղվում էր այս մասնագիտությամբ, թեև վերջացրել էր ատամնաբուժական դպրոցը: Հայտնի չէ, թե ընտանիքի մյուս անդամները ինչ ճակատագիր են ունեցել⁵:

Արդիական բժշկական վարժարանի ստեղծումով սկսեցին գործել բժշկական կրթություն ստացած բժիշկներ: Այդ վարժարանի հիմնադիրներից Մանվել Շաշյանը, սուլթան Մահմուդ Երկրորդի անձնական բժիշկն էր: 1838 թ. նա քանդել է տալիս Շահզադե-Բաշըում եղած վիրաբուժական նախնական դպրոցը և տեղը կառուցում բժշկական վարժարանը⁶: 1932 թ. Բուխարեստում կայացած Բժշկության պատմության իններորդ համաժողովում ընթերցվեց բժիշկ Վ. Թորգոմյանի ուղարկած ֆրանսերեն լեզվով «Կ. Պոլսո բժշկական համալսարանի նախկին հայ ուսուցիչները» հոդվածը, որտեղ վերհանված էր Մահմուդ Երկրորդի անձնական բժիշկ Մանվել Շաշյանի դերը Օսմանյան կայսրության Բժշկական վարժարանի հիմնադրման մեջ և տեղեկություն էր տրվում այն հայ բժիշկների մասին, որոնք այդտեղ դասախոսել էին: Այս հանգամանքը առաջացրել էր թուրք պատվիրակների գայրույթը, որոնք ժխտել էին այդ փաստը՝ պնդելով, որ հայերը դրա հետ ոչ մի առնչություն չունեն, իսկ Կ. Պոլսի «Վաքըթ» («Ժամանակ») թերթը գրել էր, որ այդ սուտ լուրը տվել է մի արկածախնդիր բժիշկ, որի անունն է Թորգոմյան⁷:

Մանրամասն անդրադառնանք այն հայտնի բժիշկների կենսագրականներին, որոնց դերը ակնհայտ էր Օսմանյան կայսրության բժշկության զարգացման գործում:

Մանվել Շաշյան (1775-1858) նյարդաբույժ, հոգեբույժ: Ծնվել է 1775 թ. մեծանուն բժիշկ Պողոս Անտոնյան-Շաշյանի ընտանիքում: Նախնական կրթությունը ստացել է Վենետիկի Մխիթարյան վարժարանում: 1795-1800 թթ. ուսանել է Պադուայի համալսարանի բժշկական ֆակուլտետում: Ստացել է բժշկի դիպլոմ, կատարելագործվել է տեսական և գործնական բժշկության մեջ: 1802 թ. վերադարձել է Կ. Պոլիս և զբաղվել պրակտիկ գործունեությամբ: Սուլթան Մահմուդ Երկրորդի կողմից արժանացել է արքունական բժշկի պաշտոնին: 1831-1832 թթ. Կ. Պոլսում բռնկված խոլերայի համաճարակի ժամանակ մեծ աշխատանք է կատարել: Արժանացել է կայսերական բազմաթիվ տիտղոսների, շքանշանների ու պարգևների⁸:

Սերովբե Վիչենյան (Սերվիչեն, 1815-1897), դատական բժիշկ, ծնվել է Կ. Պոլսում, նախնական կրթությունը ստացել է հայկական դպրոցում: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո, 1834 թ. մեկնել է Փարիզ և ընդունվել համալսարանի բժշկական ֆակուլտետ: Ավարտելուց ընդամենը մեկ տարի առաջ տեղափոխվել է Պիզա (Իտալիա), որտեղ 1840 թ. բժշկի կոչում ստանալուց հետո վերադարձել է Փարիզ և երկու տարի

⁵ Նույն տեղում, էջ 164-166:

⁶ Միրունի Հ., Պոլիս և իր դերը, հ. IV, Անթիլիաս, 1988, էջ 253:

⁷ Անահիտ, Փարիզ, 1936, սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 34:

⁸ Թորգոմյան Վ., Բժիշկ Մանվել Շաշյան (Հանդես ամսօրյա, Վիեննա, 1894, N 4, էջ 117-120):

կատարելագործվել ուրուղիայի մեջ: Որոշ ժամանակ աշխատել է Անգլիայի և Իտալիայի բժշկական ուսումնական հաստատություններում և 1842 թ. վերադարձել Կ. Պոլիս, որտեղ մեծ հեղինակություն է ձեռք բերել: 1846 թ. հրավիրվել է Կ. Պոլսի բժշկական դպրոց, այնտեղ շուրջ 30 տարի ղեկավարել է դատական բժշկության ամբիոնը՝ միաժամանակ դասավանդելով «ներքին հիվանդություններ» և «դատական բժշկություն» առարկաները: 1844 թ. լույս է տեսել Սերվիչենի «Մանկատածութին, որ է բնական, բարոյական և իմացական հրահանգ խնամատարութեան մանկանց» աշխատությունը՝ նվիրված երեխաների խնամքի և դաստիարակության հարցերին: Նկատի ունենալով օտար լեզուների նրա կատարյալ իմացությունը և բժշկագիտական ծավալուն ու բազմակողմանի գիտելիքները՝ 1849 թ. Սերվիչենին հրավիրել են Կ. Պոլիս, որտեղ նա ստանձնել է ֆրանսերեն լույս տեսնող «Արևելքի բժշկական թերթի» (*“La gazette Medicale d’ Orient”*) գլխավոր խմբագրի պաշտոնը: Նա Կ. Պոլսի բժշկական ընկերության հիմնադիրներից է և զգալի աշխատանք է կատարել ընկերության գործունեությունն աշխուժացնելու ուղղությամբ, զեկուցումներով հանդես է եկել ընկերության նիստերում, եղել է քաղաքային բժշկական բարձրագույն խորհրդի նախագահ, Ազգային ժողովի անդամ, ուսումնական խորհրդի ատենապետ, մասնակցել է Ազգային սահմանադրության նախագծերի և տարբերակների մշակման աշխատանքներին: Իր բժշկական, գիտամանկավարժական և հասարակական գործունեության ընթացքում զբաղեցրել է բազմաթիվ պաշտոններ, բայց միշտ մնալով հեղինակավոր հասարակական գործիչ, հոգատար բժիշկ, զարգացած և բանիմաց մանկավարժ: Սերվիչենը բազմաթիվ գիտական աշխատությունների հեղինակ է և իր ծառայությունների համար կառավարության կողմից արժանացել է մեծարման՝ պարգևատրվելով «Մեշիդիե», «Օսմանիե», «Նիշանը իֆթիհար» շքանշաններով⁹:

Միքայել Խորասանձյան (1835-1903), ծնվել է Կ. Պոլսում: Սկզբնական կրթությունն ստացել է ծննդավայրում, ապա ուսումը շարունակել Փարիզում: 1859 թ. ավարտելով Փարիզի համալսարանի բժշկական ֆակուլտետը՝ Խորասանձյանը վերադարձել է Պոլիս, իր հետ բերելով վիրաբուժական կատարելագործված գործիքների հարուստ հավաքածու, որոնցից օգտվելու մեծ փորձ և հմտություն էր ձեռք բերել: Նման բժշկական գործիքներ մինչ այդ Օսմանյան կայսրությունում չէին գործածվել: 1860 թ. բինբաշու (հազարապետ, մայր) աստիճանով նշանակվել է ռազմանավի բժիշկ: 1866 թ. Մ. Խորասանձյանն ընտրվել է Կայսերական բժշկական ընկերության անդամ: Մտահոգված լինելով ազգաբնակչության բուժապասարկման մակարդակի բարձրացմամբ՝ կանխարգելիչ միջոցառումների հարցով հաճախ անձամբ մասնակցել է հիվանդանոցների գործունեությունն ստուգող հանձնաժողովների աշխատանքին, իր լուրման ներդրել տեղ գտած թերությունների վերացման գործում: Թոքախտի հետ կապված որոշ հարցերի ուսումնասիրման նպատակով՝ կառավարության կողմից պատվիրակության կազմում գործուղվել է Բեռլին և գործուն մասնակցություն ունեցել պատվիրակության աշխատանքներին: 1873

⁹ Ծիրինյան Ա., Շայ անվանի բժիշկներ, գիրք Ա, Ե., 2002, էջ 55-56:

-1902 թթ. նա դասավանդել է Կ. Պոլսի բժշկական բարձրագույն դպրոցում, մասնակցել բժշկական կադրերի պատրաստման գործին: Հեղինակ է տպագիր և ձեռագիր մի շարք բժշկական տեղեկագրերի և բժշկակրթական ծրագրերի, որոնց նպատակն էր բարելավել բժշկական դպրոցներում ուսումնական գործընթացը, սովորողներին տալ բժշկության մասին համեմատաբար ընդարձակ գիտելիքներ և օգնել որակյալ բժիշկների պատրաստման աշխատանքներին: Գիտամանկավարժական գործունեությունից բացի, նա զբաղեցրել է պետական կարևոր պաշտոններ, աշխատել է քաղաքապետարանում, Առողջապահության գերագույն ժողովում, Համիդիեի մանկական հիվանդանոցում և Էյուբի զինվորական հիվանդանոցում: Մշտապես եղել է սուլթան Համիդի պալատական վստահելի բժիշկը: Նա բազմակողմանի զարգացած, ժամանակի առաջադեմ բժիշկներից էր, տիրապետում էր մի շարք օտար լեզուների, բարձր է գնահատվել ինչպես գործընկերների, հասարակության, այնպես էլ կառավարության կողմից: 1866 թ. արժանացել է առաջին կարգի «Մեջիդիե» և երկրորդ կարգի «Օսմանիե» շքանշանների¹⁰:

Նահապետ Ռուսինյան (1819-1876), ծնվել է Կեսարիայում: Բժշկական կրթությունն ստացել է Փարիզում: 1850-1860 թթ. աշխատել է Բաբը Սերասքերի հիվանդանոցում: 1856թ. ընտրվել է Կայսերական բժշկական ընկերության անդամ, եղել է *“La gazette Medicale d’Orient”* թերթի խմբագիր: 1874-1876 թթ. բժշկական ուսումնարանում դասավանդել է ֆրանսերեն և փիլիսոփայություն, նաև ախտաբանական կազմախոսություն, բժշկական բարոյագիտություն: Նահապետ Ռուսինյանը ճանաչված էր նաև որպես բանաստեղծ-թարգմանիչ և իրավաբան: Նրա գրչին է պատկանել հայոց մեջ մեծ տարածում գտած և սիրված «Կիլիկիա» քնարական երգի խոսքը: Ն. Ռուսինյանը արևմտահայերի սահմանադրության հայրերից մեկն է, արևմտահայ գրական աշխարհաբարի ջատագով և «արմեներենի» հեղինակը: Համայնքի գործերով շատ զբաղված լինելու պատճառով նրա մասին ասվել է, թե «Նա դեղատոմսից շատ գիրք է գրել»: Իր իմաստասիրական ըմբռնումներն ամփոփել է ֆրանսերեն լեզվով գրված «Փիլիսոփայություն» դասագրքի մեջ¹¹:

Ստեփան փաշա Ասլանյան (1822-1901), ծնվել է Կ. Պոլսում, որտեղ էլ ստացել է միջնակարգ կրթությունը: Ավարտել է Ազգային ճեմարանը, իսկ հետո՝ նոր բացված Ռազմաբժշկական բարձրագույն դպրոցը: Չորս շրջանավարտների հետ միասին Ս. Ասլանյանին գործուղել են Վիեննա՝ կատարելագործվելու: Քննությունը հաջողությամբ հանձնելուց հետո պաշտպանել է ստենախոսություն, ստացել Վիեննայի համալսարանի դոկտորի վկայագիր: 1848 թ. վերադարձել է Պոլիս, որտեղ մասնակցել է քաղաքում բռնկված խռիչքայի համաճարակի դեմ կազմակերպված աշխատանքներին, այնուհետև՝ նշանակվել զինվորական հոսպիտալի բժիշկ: 1849 թ. նրան հրավիրել են աշխատելու բժշկական բարձրագույն դպրոցում, որտեղ դասավանդել է «Առաջին օգնություն» առարկան: 1858-1870 թթ. ղեկավարել է վիրաբուժության ամբիոնը՝ իրեն դրսևորելով

¹⁰ Ազատյան Թ., Ակն և ակնցիք, Բոթանայուլ, 1943, էջ 87-88:

¹¹ Ասատուր Հրանտ, Դիմաստվերներ, Կ. Պոլիս, 1921, էջ 72:

որպես տաղանդավոր դասախոս և մանկավարժ: 1863-1864 թթ. եղել է կրթության ընդհանուր տեսուչ, 1869 թ. հիմնադրել է Սկյուտարի բժշկական ընկերությունը: 1870 թ. ստացել է փաշայության աստիճան և ընտրվել Առողջապահության գերագույն ժողովի անդամ: 1875-1876 թթ. նշանակվել է Ռումելիի ընդհանուր առողջապահության տեսուչ, իսկ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ ծառայել է օսմանյան բանակում՝ որպես բժիշկ: Պարգևատրվել է առաջին կարգի «Մեջիդիե» շքանշանով¹²:

Անդրանիկ փաշա Կրճիկյան (1819-1894), ծնվել է Կ. Պոլսում: Միջնակարգ կրթությունը ստանալուց հետո ուսումնառությունը շարունակել է Փարիզում, ուսումնասիրել բնական գիտություններ: 1844 թ. վերադարձել է Կ. Պոլիս և աշխատանքի անցել կայսերական հիվանդանոցում, միաժամանակ կարդացել է դասախոսություններ: Ֆրանսերենի լավ իմացության շնորհիվ Կրճիկյանը նշանակվել է Ֆրանսիայում Օսմանյան կայսրության դեսպանի թարգմանիչ: Հետագայում, որպես թարգմանիչ, խորհրդատու և գործերի կառավարիչ, ուղեկցել է դեսպանին տարբեր երկրներ: Մասնակցել է Կ. Պոլսի հայերի գերագույն ժողովներին, եղել է ազգային երեսփոխան և այլն: 1851 թ. Կ. Պոլսի զինվորական բժշկական վարժարանում դասավանդել է ֆիզիկա, միաժամանակ ուսանել նույն վարժարանում, որը 1855 թ. ավարտել է և ճանաչվել հազարապետի աստիճանով բժիշկ: 1856 թ. մեկնել է Եվրոպա՝ գիտական գործուղման, որտեղ անցկացրել է 5 տարի: Կրճիկյանը 1874 թ. զինվորական բժշկական վարժարանում դասավանդել է բնագիտություն և մի խումբ առաջադեմ մտավորականների հետ մասնակցել բժշկական նոր վարժարան հիմնելու գործին: Մասնագիտության մեջ կատարելագործվելու համար մեկնել է Անգլիա, ապա՝ Իտալիա: Կ. Պոլիս վերադառնալուց հետո 1882 թ. գնդապետի կոչում է ստացել, միաժամանակ աշխատել երկու բժշկական վարժարաններում, իսկ 1884 թ. ստացել է փաշայության աստիճան և նշանակվել բժշկական վարժարանի տնօրեն: Մանկավարժական գործունեությունից բացի, զբաղվել է նաև գիտահետազոտական աշխատանքներով, հրատարակել «Առողջաբանություն կամ առողջ ապրելու մասնավոր և ընդհանուր կանոնները» եռահատոր աշխատությունը և երկհատոր «Բնագիտություն» դասագիրքը՝ թուրքերեն լեզվով: Օժտված լինելով նկարչի և փորագրչի ձիրքով՝ Ա. Կրճիկյանն անձամբ է կատարել իր աշխատությունների նկարագրողումները, միաժամանակ զբաղվել վարժարանի գործիքների վերանորոգման և թանգարանի համար թռչունների և կենդանիների խրտվիլակներ պատրաստելու գործով, որին ծանոթացել էր դեռևս Փարիզում ուսանելու տարիներին¹³:

Տիգրան Փեշտիմալճյան (1840-1894), ծնվել է Հասքոյում: Փարիզում 1867 թ. ստացել է բժշկական կրթություն, երկու տարի անց վերադարձել է Մտամբուլ և ընտրվել Կայսերական բժշկական ընկերության անդամ: 1877-1878 թթ. դարձել է նույն ընկերության նախագահ, արժանացել է

¹² Թորգոմյան Վ., Բժիշկ Ստեփան փաշա Ասլանյան (Հանդես ամսօրյա, Վիեննա, 1905, N 3, էջ 75-79):

¹³ Նույն տեղում, էջ 782:

փաշայության աստիճանի: 1867 թ. նա պաշտպանել է դոկտորական թեզ, 1880 թ. գրել է եռահատոր գիրք մանուկների առողջության մասին, իսկ 1883 թ. հրատարակել է գիրք՝ պատվաստման և դրա նշանակության մասին¹⁴: Շատ հայտնի է եղել արքունիքում, 1884 թ. եղել է սուլթանի խորհրդատու բժիշկը¹⁵:

Անտոն փաշա Նաֆիյան (1831-1912), ծնվել է Կ. Պոլսում, Զինվորական վարժարանն ավարտելուց հետո մեկնել է Փարիզ և ստացել բժշկական մի քանի մասնագիտություն: 1863 թ. սուլթանի թիկնապահ գնդի բժիշկ է նշանակվել: 1869 թ. Հայդար փաշայի հիվանդանոցում ուսանողներին սովորեցրել է գործնական բժշկություն¹⁶: Հետագայում դարձել է այդ հիվանդանոցի գլխավոր բժիշկը: 1871 թ. Կայսերական բժշկական ընկերության անդամ է ընտրվել, եղել է ուրուլոգիայի առաջին դասախոսը: 1868թ. սկսած՝ բանակում բարձրացել է տարբեր աստիճանների: Արժանացել է երկրորդ կարգի «Մեջիդիե» և երկրորդ կարգի «Օսմանիե» շքանշանների¹⁷:

Հովսեփ Նուրիճան (1828-1898), ծնվել է Կ. Պոլսում, բժշկական կրթությունը ստացել է Փարիզում: 1864 թ. վերադարձել է Կ. Պոլիս, 1865-1866 թթ. վարել է Սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի գլխավոր բժշկի պաշտոնը, հետո աշխատել է Սուրբ Հակոբ ֆրանսիական հիվանդանոցի՝ վարակիչ հիվանդությունների բաժնում: 1867 թ. ընտրվել է Կայսերական բժշկական ընկերության անդամ և երեք շրջան (1876-1877, 1885-1886, 1886-1887) եղել է նույն ընկերության նախագահ, իսկ 1876 թ. մասնակցել է Կարմիր մահիկի հիմնադրման համար կազմակերպված խորհրդակցությանը¹⁸:

Հովսեփ Բեյրան (1825-1866), ծնվել է Էդիրնեում: Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում, միջնակարգը՝ Կ. Պոլսի Սկյութարի ճեմարանում: 1844 թ. ընդունվել է Փարիզի համալսարանի բժշկական ֆակուլտետ: 1850 թ. ստանալով բժշկական դոկտորի վկայական՝ վերադարձել է Կ. Պոլիս: Փարիզում նա զբաղվել է ուրուլոգիայի և վեներական հիվանդությունների ուսումնասիրությամբ: Վերադառնալով Կ. Պոլիս՝ նախ, որպես վիրաբույժ ու վեներաբան, աշխատել է Ծովային զինվորական հոսպիտալում, ապա՝ Սուրբ Փրկիչ ազգային հիվանդանոցում: 1854 թ. նշանակվել է Փարիզի թուրքական դեսպանատան բժիշկ: 1858 թ. նրան շնորհվել է Պատվո լեգեոնի ասպետի շքանշան: Նույն թվականին ընտրվել է Կ. Պոլսի կայսերական բժշկական ընկերության անդամ, 1862 և 1864 թթ.՝ Փարիզի երկու բժշկական ակադեմիաների անդամ: Իր գործունեության ընթացքում մեծ ճանաչման արժանացած բժիշկը զբաղվել է գիտական աշխատանքով, գրել և հրատարակել է տասնյակ արժեքավոր աշխատություններ: 1851 թ. հրատարակել է «Վեներական հիվանդությունների մասին», 1854 թ.՝ «Բժշկությունը Թուրքիո մեջ» աշխատությունները: Հայտնի է

¹⁴ Նույն տեղում, էջ 792:

¹⁵ Միրունի Հ., նշվ. աշխ., էջ 256:

¹⁶ Ընդարձակ տարեցույց Ազգային հիվանդանոցի, Պոլիս, 1931, էջ 141:

¹⁷ Yarman A., նշվ. աշխ., էջ 790:

¹⁸ Նույն տեղում:

նրա «Ընդհանուր ախտաբանություն» դասագիրքը, որը լույս է տեսել 1863 թ., ֆրանսերեն լեզվով: 1864 թ. ընտրվել է բժշկական ֆակուլտետի պրակտիկ դպրոցի պրոֆեսոր: Ստեղծել է տարբեր բուժական սարքեր և հայտնաբերել բազմաթիվ դեղամիջոցներ¹⁹:

Վիչեն Օրմանյան (1844-1889), ծնվել է Կ. Պոլսում: 1863-1865 թթ. ուսանել է Հռոմում, ստացել բժշկության և վիրաբուժության դոկտորի վկայական: Հետագայում ուսումը կատարելագործել է Փարիզի և Լոնդոնի բժշկական համալսարաններում: 1873 թ. վերադառնալով Կ. Պոլիս՝ աշխատանքի է անցել Սուրբ Հակոբ հիվանդանոցում՝ որպես բժշկապետ, ապա՝ վերատեսուչ և հոգաբարձության ատենապետ: 1879-1889 թթ. Սուրբ Փրկիչ հիվանդանոցի բժշկապետն էր: 1883-1886 թթ. հիվանդանոցի հոգաբարձության քառամյա տեղեկագրում 104 մեծադիր էջ է զբաղեցնում դոկտոր Օրմանյանի պատրաստած «Հիվանդներ» մասը, որը, որպես գիտական կարևորություն ունեցող մի գործ, պարունակում է վիճակագրական ցուցակներ, շահեկան խորհրդածություններ՝ հիվանդանոցի և նրա բաժանմունքները կազմող, այն ժամանակվա տերմինաբանությամբ՝ «Հիմարանոցի» և «Ապուշանոցի» մասին: Այդ տեղեկագիրը օրինակ է դարձել հաջորդների համար: Փաստորեն, Վ. Օրմանյանը հայ և թուրք իրականության մեջ առաջինն է, որ կատարել է հոգեկան հիվանդություններին նվիրված ուսումնասիրություններ, գրի է առել հիվանդների բուժական ու հոգեկան կյանքին վերաբերող սեփական դիտարկումներն ու խորհրդածությունները: Որոշ ժամանակ պետական պաշտոն է վարել զինվորական հիվանդանոցներում²⁰:

Կարապետ Յարուբյան (1865-1936), ծնվել է Էդիրնեում: 1889 թ. Փարիզում բժշկական կրթությունը կատարելագործելով՝ վերադարձել է Կ. Պոլիս: Աշխատել է Սուրբ Փրկիչ հիվանդանոցում՝ որպես բժիշկ, հետո՝ գլխավոր բժիշկ: 1890 թ. Կայսերական բժշկության ընկերության անդամ էր, 1909-1911 թթ. նույն ընկերության փոխնախագահ, 1913 թ. նախագահ: Բալկանյան պատերազմում Կարմիր մահիկի Քաղըրգա հիվանդանոցում բժիշկ Քափամաճյանի հետ վարել է վիրաբույժի պաշտոն: Այդ ընթացքում վերքերի բուժման հետ կապված իր փորձարկումները մի գրքույկով հրատարակել է՝ արժանանալով պետության խրախուսանքին և պարգևատրմանը: Նա մասնակցել է Բարձրագույն առողջապահական խորհրդին, որտեղ ներկայացրել է հայ բժիշկներին:

Ստանձնել է նաև Սուրբ Հակոբ հիվանդանոցի գլխավոր բժշկի պաշտոնը, եղել է հայ բժիշկների ընկերության նախագահ և Սուրբ Փրկիչ հիվանդանոցի հոգաբարձության անդամ: 1907 թ. արժանացել է «Մեջիդիե» շքանշանի²¹:

¹⁹ Նույն տեղում, էջ 779:

²⁰ Մինասյան Հ., 100 հայ հոգեբույժներ, Կենսագրական բառարան, գիրք Ա, Ե., 2002, էջ 207-208:

²¹ Նույն տեղում, էջ 799:

Պողոս Զոհրապյան (Պոլ Զոհրապ) (1803-1883), մանկաբարձ-գինեկոլոգ, սովորել է Էդինբուրգում, եղել է մանկաբարձության առաջին դասախոսը, աշխատել է Կ. Պոլսի անգլիական դեպանատանը²²:

Տիգրան Բաբայան (1859-1934), 1882 թ. ավարտել է բժշկական ուսումնարանը, որպես բժիշկ-մանկաբարձ: Իր գիտելիքները կատարելագործել է Փարիզում: 1900 թ. վերադառնալով Կ. Պոլիս դարձել է պալատի մանկաբարձական բաժնի գլխավոր բժիշկ: 1904 թ. ստացել է բժշկական ուսումնարանի գինեկոլոգիայի ամբիոնի պրոֆեսորի կոչում²³:

Գասպար Մինապյան (1814-1872), ծնվել է Կ. Պոլսում՝ բժիշկ դեղագործի ընտանիքում: Հայրը եղել է Մահմուդ Երկրորդի անձնական բժիշկը: Նախնական կրթությունը ստացել է Կ. Պոլսում, ապա, որպես աշակերտ, աշխատել է հոր դեղատանը: Միաժամանակ մասնագիտացել է դեղագործության գծով, սովորել է իտալերեն, ֆրանսերեն: Մեծ դժվարությամբ ընդունվել է Կ. Պոլսի վիրաբուժական դպրոցը, որտեղ արգելված էր քրիստոնյաների մուտքը: Այն ավարտելուց հետո ստացել է վիրաբույժի օգնականի կոչում: 1834 թ. մեկնել է Փարիզ և ընդունվել համալսարանի բժշկական ֆակուլտետ: Որոշ ժամանակ անց ուսումն ընդհատել է: Այնուհետև տեղափոխվել է Իտալիա և ուսումը շարունակել Պիզայի համալսարանի բժշկական ֆակուլտետում, որն ավարտել է 1841 թ.: 1841-1843 թթ. ուսումը շարունակել է Փարիզում, ավարտելուց հետո ստացել է բժշկի երկրորդ դիպլոմ և արժանացել բժշկության դոկտորի տիտղոսին: 1843 թ. վերադառնալով Կ. Պոլիս՝ զբաղվել է բժշկությամբ: 1845-1872 թթ. որպես պրոֆեսոր՝ ֆիզիոլոգիա և ընդհանուր ախտաբանություն է դասավանդել մայրաքաղաքի բժշկական դպրոցում: Եղել է սուլթան Մեջիդի արքունական բժիշկը, 1858 թ. նշանակվել է կրթական և առողջապահական պետական ժողովների և վճռաբեկ դատական խորհրդի անդամ: 1856 թ. ընտրվել է Կ. Պոլսի կայսերական բժշկական ընկերության անդամ, 1863 թ.՝ ընկերության նախագահ, 1866 թ.՝ պատվավոր անդամ: Թողել է հարուստ գիտական ժառանգություն, որի մեծ մասը տպագրվել է *“La gazette Medicale d' Orient”* - ում: Պարգևատրվել է շքանշաններով²⁴:

Գաբրիել Սևյան (1822-1900), 1850 թ. մտել է ծովային ծառայության՝ Մուստաֆա փաշայի մոտ՝ որպես ռազմանավի բժիշկ: 1851 թ. եղել է ծովային և ցամաքային հիվանդանոցների բժիշկ, ծառայել է տարբեր ռազմանավերի վրա: 1862 թ. ընտրվել է բժշկական ընկերության անդամ, 1871 թ.՝ ծովային բժշկական խորհրդի անդամ, 1872 թ.՝ այդ խորհրդի նախագահ: 1876 թ. մասնակցել է Կարմիր մահիկի հիմնադրմանը: 1879 թ. եղել է կայսերական «Իզեդդին» շոգենավի բժշկապետ, 1892 թ. մասնակցել է Առողջապահական կայսերական խորհրդին, որը գումարվել է

²² Ընդարձակ տարեցույց Ազգային հիվանդանոցի, էջ 138:

²³ Նույն տեղում:

²⁴ **Թորգոմյան Վ.**, Բժիշկ Գասպար Բեյ Մինապյան (Հանդես ամսօրյա, Վիեննա, 1896, N 11, էջ 330-340):

է Բ. Դոան կողմից: Այդ առիթով ստացել է գեներալ-մայորին համազոր աստիճան: 1897 թ. անցել է հանգստի²⁵:

Տիգրան Աճեմյան (1852-1913), հայտնի ակնաբույժ է եղել: Պեզճյան վարժարանը ավարտելուց հետո 1866 թ. ընդունվել է Զինվորական բժշկական ուսումնարան, որն ավարտել է 1873 թ., կապիտանի կոչումով: Պետության կողմից ուղարկվել է Վիեննա և այնտեղ երկու տարի կատարելագործվել է ակնաբուժության մեջ: Վերադառնալով՝ երեք տարի աշխատել է Սալոնիկի հիվանդանոցում, հետո՝ Հայդար փաշայի հիվանդանոցում: Միևնույն ժամանակ, Կայսերական բժշկական ուսումնարանում դասավանդել է «ակնաբուժություն»: 1899 թ. պարգևատրվել է երրորդ աստիճանի «Օսմանիե» և «Մեջիդիե» շքանշաններով, ստացել է ոսկե մեդալ: 1909 թ. ընտրվել է Կայսերական բժշկական ընկերության անդամ, հետո էլ նախագահել այդ ընկերությունը: Իր ծառայությունն ավարտել է գնդապետի աստիճանով: Ակնաբուժության վերաբերյալ ունի բազմաթիվ աշխատություններ՝ հայերեն, թուրքերեն, ֆրանսերեն լեզուներով²⁶:

Հովհաննես Քյաթիայան (1821-1882), ծնվել է Էդիրնեում, ավարտել է Փարիզի բժշկական համալսարանը: 1862 թ. վերադարձել է Կ. Պոլիս, 1867 թ. դարձել է Կայսերական բժշկական ընկերության անդամ: Նա մեծ հեղինակություն էր վայելում և՛ բժշկական գիտելիքներով, և՛ բարեգործությամբ: Ճանաչված էր կայսերական պալատում, դեսպանատներում: Նա օգնում էր բոլորին, սիրով մտնում էր յուրաքանչյուր տուն, նույնիսկ դրամ էր տալիս դեղի և սննդի համար: Իր բնակարանը վերածել էր հիվանդանոցի ու իր ծախսով բուժում էր բոլոր դիմողներին:

Սուլթանուհին ծննդաբերության ժամանակ հայտնվում է վտանգավոր վիճակում, պալատական բժշկապետը դողահար դիմում է բժիշկ Քյաթիայանին, որը փրկում է և՛ մոր, և՛ երեխայի կյանքը: Աբդուլ Համիդը նրան հրավիրում է պալատ և, իբրև վարձատրություն, առաջարկում է դառնալ պալատի բժշկապետ, բայց Քյաթիայանը շնորհակալություն հայտնելով՝ մերժում է՝ ասելով, որ ինքը «աղքատների բժիշկ է և կփափագի միշտ այդպես մնալ»: Այդ մերժումը նրա մահվան պատճառն է դառնում, քանի որ դրանով վիրավորել էր Աբդուլ Համիդին, նաև շերիի օրենքով սուլթանուհու մարմինը տեսնող բժիշկը պետք է դառնար պալատական բժիշկ: Այդ դեպքից հետո նրան հրավիրում են մի փաշայի տուն՝ հիվանդ նայելու, որտեղից Քյաթիայանը չի վերադառնում²⁷: Նրան գտնում են ծովափին՝ սպանված:

Վահան փաշա Մանվելյան (1847-1902), սովորել է Կ. Պոլսի բժշկական վարժարանում: 1869-1872 թթ. պաշտոնավարել է Հայդար փաշայի հիվանդանոցում, 1872 թ. կառավարության կողմից ուղարկվել է Փարիզ՝ «ներքին ախտաբանություն» ուսումնասիրելու նպատակով: 1875 թ. վերադարձել է Կ. Պոլիս, 1882 թ. ստացել բինբաշու աստիճան, 1885 թ. անվանվել կայսերական բժիշկ՝ համապատասխան աստիճանով: 1892 թ.

²⁵ Թորգոմյան Վ., Բժիշկ Գաբրիել Փաշա Սևյան (Հանդես ամսօրյա, Վիեննա, 1899, N 6, էջ 167-173):

²⁶ Ընդարձակ տարեցույց Ազգային հիվանդանոցի, էջ 141:

²⁷ Մազմանյան Գ., Դոկտոր Քյաթիայան (Անահիտ, Փարիզ, 1931, հունվար-ապրիլ, էջ 143):

ստացել է ալայբեյի (գնդապետ), 1900 թ.՝ գեներալ-մայորին համազոր կոչում²⁸:

Բարունակ Բեյ Քրթիկյան (Ֆերուհյան) (1824-1868), ծնվել է Կ. Պոլսում, նախնական կրթությունն ստանալուց հետո ուսումը շարունակել է Կալաթա-Մարայի ռազմաբժշկական ուսումնարանում: 1847 թ., դեռևս ուսումնարանը չավարտած, նշանակվել է Օսմանյան կայսրության փոքրասիական նահանգներ գործուղված խմբի բժիշկ: Տասն ամիս տևած այդ գործուղման ընթացքում նա բնակչությանը բժշկական օգնություն է ցույց տվել, կատարել ծաղկի դեմ պատվաստումներ: Կ. Պոլիս վերադառնալով՝ շարունակել է ուսումը, որը 1849 թ. ավարտելուց հետո նշանակվել է Հայդար փաշայի հոսպիտալի բժիշկ՝ բինբաշու աստիճանով: Որոշ ժամանակ անց՝ 1850 թ. վերադարձել է Կ. Պոլիս և շարունակել է իր բժշկական գործունեությունը: 1852-1855 թթ. պաշտոնավարել է Մանասթըրի գինվորական հիվանդանոցում՝ որպես բժշկապետ: 1855 թ. կայսերական բանակի բժշկապետ է եղել: Կենտրոնական ուսումնական խորհրդի ատենապետն էր²⁹: Եղել է Զինվորական բժիշկների ընկերության անդամ, 1857 թ. հրատարակել է «Թոքախտի պատճառները և բուժումը» աշխատությունը, 1862 թ. եղել է «Ֆարմա» միության նախագահ, գիտությունների հանձնաժողովի անդամ: 1865 թթ. երկրում ծագած չարորակ տենդի և խոլերայի համաճարակների դեմ պայքարի ուղղությամբ ակտիվ աշխատանքների համար արժանացել է կառավարական պարգևների³⁰:

Կարապետ Փաշայան (1864-1915), ծնվել է Կ. Պոլսում, 1888 թ. ավարտել է Կ. Պոլսի բժշկական վարժարանը և մասնագիտացել ակնաբուժության գծով, աշխատել է Բալուի, Մալաթիայի, Տիվրիկի թաղապետական բժիշկ, Շապին Գարահիսարի մոտ՝ Լիհեսեի արծաթահանքի անգլիական ընկերության բժիշկ: 1895 թ. մեկնել է Պարսկաստան՝ դարձել թագաժառանգ Մեհմեդ Ալի Շահի խորհրդական բժիշկը, ինչպես նաև արտաքին գործոց նախարարության բժիշկը: 1908 թ. վերադարձել է Կ. Պոլիս, ընտրվել Ազգային ժողովի երեսփոխան: 1882 թ. թղթակցել է բազմաթիվ հայկական, ֆրանսիական, գերմանական, թուրքական, պարսկական բժշկաառողջապահական և գրական-հասարակական պարբերականներին: Զբաղվել է դպրոցական առողջապահության խնդիրներով: Թողել է գիտական մեծ ժառանգություն, որն ամփոփված է 16 հատորներում: Եղել է մի քանի միջազգային բժշկական և առողջապահական ընկերությունների անդամ: Եղեռնի նահատակ է³¹:

Նազարեթ Տաղավարյան (1862-1915), ծնվել է Սեբաստիայում, 1869 թ. ընդունվել Կ. Պոլսի Սկյուտար-Սելամսըզի ազգային վարժարանը, հետագայում ուսումը շարունակել է Ղալաթիայի Լուսավորչական վարժարանում: 1878 թ. մեկնել է Փարիզ, որտեղ սովորել է երկրագործական բարձրագույն ուսումնարանում, որն ավարտելուց հետո ստացել է գյուղատնտես-ինժեների որակավորում: 1883 թ. վերադառնալով Կ. Պո-

²⁸ Նույն տեղում, էջ 292:

²⁹ Նույն տեղում, էջ 93:

³⁰ Yarman A., նշվ. աշխ., էջ 786:

³¹ Մինասյան Հ., 100 հայ հոգեբույժներ, Կենսագրական բառարան, գիրք Գ, Ե., 2005, էջ 220-222:

լիս՝ որոշ ժամանակ աշխատել է երկրագործության նախարարությունում, ապա վերադարձել Սեբաստիա և ստանձնել Ազգային վարժարանների տնօրինությունը, բարեկարգել վարժարանները, ստեղծել չափահասների համար կիրակնօրյա դպրոցներ, փոփոխություններ մտցրել ուսումնական ծրագրերում, հիմնել ընկերություն, որն զբաղվել է իգական սեռի դաստիարակության հարցերով: 1885 թ. վերադառնալով Կ. Պոլիս՝ նշանակվել է Հայկական վարժարանի տնօրեն և կարճ ժամանակամիջոցում դպրոցը դարձրել առաջավոր կրթօջախ: 1887 թ. մեկնել է Ֆրանսիա, որտեղ միաժամանակ սովորել է Փարիզի համալսարանի բնագիտական և բժշկական ֆակուլտետներում: 1892 թ. ավարտել է բնագիտական, իսկ մեկ տարի անց՝ բժշկական ֆակուլտետը, վերադարձել է Կ. Պոլիս և որպես բժիշկ աշխատել ֆրանսիական հիվանդանոցում: Ֆրանսիական կառավարության կողմից արժանացել է ակադեմիկոսի տիտղոսի և ստացել «*Merite agricole*» շքանշանը: 1899 թ. սկսած եղել է Սուրբ Փրկիչ ազգային հիվանդանոցի տնօրենը, Բերայի Ազգային վարժարանի հոգաբարձուն: 1904 թ. ընտրվել է Փարիզի Աստղագիտական ընկերության թղթակից անդամ, 1908 թ.՝ օսմանյան խորհրդարանի ազգային երեսփոխան Սեբաստիայից: 1913 թ. նշանակվել է Կ. Պոլսի քաղաքապետարանի ընդհանուր քննիչ:

Ն. Տաղավարյանը հեղինակ է շուրջ 15 գիտական աշխատությունների, մի քանի տասնյակ հոդվածների: Հիշատակության են արժանի «Մարդու սաղմնաբանությունը», «Մանրէաբանություն», «Հիգիենա» աշխատությունները, «Բժշկական տերմինների բառարանը»: Ուսումնասիրել է միզաքարային հիվանդությունը, զբաղվել դրա պատճառագիտության և կազմության հարցերով և այդ մասին ֆրանսերեն լեզվով հոդված հրատարակել: «Մանրէաբանություն» մենագրությունը թարգմանվել և հրատարակվել է թուրքերեն: Գիտնականը բազմակողմանի զարգացած անհատականություն էր, տիրապետում էր մի շարք օտար լեզուների, հետաքրքրվում գիտության տարբեր ճյուղերով: Դարձել է 1915 թ. եղեռնի զոհ³²:

XIX դ. կեսերից Օսմանյան կայսրությունում սկսվել է դեղագործության արագընթաց զարգացումը: Եվրոպայում կրթություն ստացած հայերն այս ասպարեզում ևս առաջատար էին: Առաջին դեղագործներից են Ջիվան և Պողոս Գալթաքյանները, Հակոբ Իսպերյանը, Միհրան Շեքերճյանը, Հովսեփ Ջիլայանը³³: Պողոս Հաննան (Շյուքրի), Անտոն Ասատուրը (Օրմանյան), Վիչեն Փափազյանը (Զաննի) Բահչեքափուում և Քոսքայում դեղատներ են բացել: Ավելի ուշ՝ Կարապետ Զաքարյանը՝ Լանկայում, Գաբրիել Դերձակյանը՝ Քոսքայում, Ջիվան Պասմաճյանը՝ Հասքոյում, Մակար Պելիքճյանը՝ Համիդիեում, Պողոս Զյովլեքճյանը՝ Ուսքյուդարում և Հովհաննես Պարոնյանը՝ Բեյքոզում, դեղատներ բացելով, ավելացրել են դրանց քանակը և իրականացրել վերջիններիս տարածումը Ստամբուլի տարբեր թաղամասերում³⁴:

³² Շիրինյան Ա., նշվ. աշխ., էջ 87-88:

³³ Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ Կեսարիո, Կահիրե, 1937, էջ 1528-1529:

³⁴ Yarman A., նշվ. աշխ., էջ 263:

1879-1883 թթ. 80 դեղագործներից ընդամենը 3-ը, 1884-1893 թթ. 140-ից՝ 13-ը, 1894-1902 թթ. 335-ից՝ 43-ը մուսուլման էին: Միայն Մտամբուլում 1879 թ. 212 դեղատուն է եղել³⁵:

Հայ դեղագործները զարկ են տվել Օսմանյան կայսրության դեղագործության զարգացմանը, իսկ այնպիսի դեղագործներ, ինչպիսիք են Հակոբ և Մաքսուտ Նարգիլեճյանները, Աբիկ Ութուճյանը, Տիգրան Միսքճյանը, Հակոբ Մինասյանը, Օթոն Ճիլաճյանը, Ալեքսանդր Բուլոթյանը ցայսօր հիշվում են և արժանի տեղ են զբաղեցնում Թուրքիայի անվանի դեղագործների շարքում³⁶:

1915-1918 թթ. երիտթուրքական կառավարության ձեռնարկած հայաջինջ ծրագրի իրագործմանը միացան նաև թուրքական բժշկական ծառայությունները և թուրք բժիշկները. «Շատերը անձամբ իսկ գործած են ոճիրներ՝ իրենց հայ պաշտոնակիցներու վրա, անոնց գույքերը յուրացնելով և նույնիսկ ընտանեկան պատիվը բռնաբարելով»³⁷: Իթթիհա-տի դեկավարներից բժիշկ Բեհաեդդին Շաքրըի կազմած ցուցակներով 1915 թ. ապրիլին ձերբակալվեցին 58 ականավոր հայ բժիշկներ, որոնցից Մաքսուդ Աբիկյանը՝ սպանվեց Սեբաստիայում, Նշան Աճեմյանը՝ Երզնկայում, Միքայել Ղարազյոզյանը՝ Տիգրանակերտում, Սուրեն Նշանյանը՝ կախաղան հանվեց Կեսարիայում, Միսաք Փանոսյանը սպանվեց Եվդոկիայում, Լևոն և Արտավազդ Ասլանյանները՝ Տրապիզոնում, Սարգիս Ադոյանը՝ Ադանայում³⁸:

Չարանենգորեն սպանված հայ դեղագործների թվում էին՝ Խոսրով Քեշիշյանը, Հակոբ Թերջյանը, Տիգրան Սարայտարյանը, Վահան Վարդանյանը, Եղիշե Փափանեայանը, Խաչիկ Փաստրմաճյանը, Գարեգին Կեյճյանը, Հովհաննես Գույումճյանը, Բարունակ Աճեմյանը, Էդուարդ Թաշճյանը, Նորայր Խաչատուրյանը, Վահան Շիրինյանը, Էդուարդ Պեյուզյանը, Վրթանես Մելյանը, Բյուզանդ Տեր-Պապիկյանը, Հակոբ Բենտիլյանը և այլք³⁹:

1915 թ. թուրքական բանակում տիֆ հիվանդությունը մեծ չափերի հասավ, որի պատճառով խիստ մեծացավ շիճուկի նկատմամբ եղած պահանջարկը: Բժիշկ Բեհաեդդին Շաքրըը այդ շիճուկի առաջին նմուշները փորձարկեց հայերի վրա: Նման չարագործությունների էին դիմում թուրք բժշկապետներ Թեվֆիք Սալիմը, Մեհմեդ Թեֆիկը, Համիդ բեյը, թուրքական զինվորական առողջապահության կազմակերպիչ Սուլեյման Նոման փաշան⁴⁰: 1915-1918 թթ. Թուրքիայում սպանվել են 60 հայ բժիշկ, 30 դեղագործ, 8 ատամնաբույժ: Բացի ուղղակի սպանվածներից, թուրքերը, տիֆի շիճուկը սրսկելով, սպանել են 43 բժշկի, 15 դեղագործի,

³⁵ IV. Türk Eczacılık Tarihi Toplantısı Bildirleri, İstanbul, 4-5 Haziran, 1998, Rengin Dramur, Türk Eczacılığının Gelişiminde Önemli Rolü Olan Hekim ve Eczacılarımızdan Etem Pertev, İbrahim Etem Ulagay ve Beşir Kemal Pelin' in Biyografileri, Marmara Üniversitesi Eczacılık Fakültesi Yayınları, 2000, s. 197-198.

³⁶ Yarman A., նշվ. աշխ., էջ 295:

³⁷ Հայ բժշկական միություն, Հայ բժշկության տված զոհերը (ցուցակագրված վավերական փաստերով), Կիլիկիա, 1919, էջ 5:

³⁸ Հայրապետյան Վ., Էջեր Հայաստանի դեղագործության պատմությունից, Ե., 1991, էջ 51:

³⁹ Նույն տեղում, էջ 56-57:

⁴⁰ Հայ բժշկական միություն, էջ 10:

բժշկական հաստատությունների 13 ուսանողի: Թուրքական յաթաղանի գոհ դարձան ավելի քան 168 բուժաշխատող⁴¹:

Կ. Պոլսի «Հայ բժշկական միությունը» 1919 թ. տեղի ունեցած չորրորդ նիստում որոշեց հավաքել և հրապարակել այն բոլոր փաստաթղթերն ու տեղեկությունները, որոնք վերաբերում էին հայ բժիշկների և դեղագործների սպանությունների մանրամասնություններին:

Ամփոփենք. հայ բժիշկները թուրքական իրականության մեջ առաջինն էին մանկաբարձության, մանկաբուժության, ուրոլոգիայի, հոգեբուժության բնագավառներում: Կատարելագործվելով եվրոպական երկրներում, փորձ ու հմտություն ձեռք բերելով՝ նրանք Օսմանյան կայսրությունում առաջին անգամ կիրառել են բացառիկ բժշկական գործիքներ և սարքավորումներ, ստեղծել են առաջին գալենիկ դեղամիջոցները⁴²: Հայ դեղագործները հեղինակ էին բազմաթիվ դեղամիջոցների, բիրոքիմիական առաջին անալիզների, կատարել են միկրոսկոպիկ հետազոտություններ, կրիայի արյունից ստացել դեղամիջոց՝ օրգանիզմի դիմադրողականությունը բարձրացնելու համար, ոսկրածուծից պատրաստած դեղամիջոցի համար ստացել նաև ֆրանսիական և իտալական պատվո նշաններ⁴³:

Հայերի կատարած անգնահատելի դերն Օսմանյան կայսրության բժշկության զարգացման գործում ակնհայտ է, և նման ապացույցներն ու փաստերը թույլ չեն տալիս հերքել և խեղաթյուրել պատմական իրողությունը:

АРМЯНСКИЕ ВРАЧИ И ФАРМАЦЕВТЫ В ОСМАНСКОЙ ИМПЕРИИ

(вторая половина XIX в. - начало XX в.)

ГИНОСЯН Н. Л.

Резюме

Армяне сыграли заметную роль в развитии медицины и фармацевтики в Османской империи. Они занимались как преподавательской, так и научной деятельностью. Армянские врачи занимали передовые позиции в урологии, акушерстве, педиатрии. Многие из них работали в дипломатических представительствах, служили в турецкой армии в качестве военных врачей, принимали участие в Балканской и Первой мировой войнах и были удостоены высших наград и чинов.

⁴¹ Նույն տեղում, էջ 20-37:

⁴² «Գալենիկ» տերմինն առաջացել է հին հռոմեացի բժիշկ Գալենի կամ նրա ուսմունքի անվանումից. այն բուսական և կենդանական հումքից ստացված դեղամիջոց է:

⁴³ Yarman A., էջ 310: